

Պ. Այդ ամենայնին սուտ է, ոչ կամեցան յերկար պահել զիս ի Փետրբօսք, զի մի շիցեն դեսքանքն երօբայու եւ յարին խնդրել զիս, եւ լիցի յազմունկն եւ խոտվութիւն: Այսպիսի պատրանօք առաքեցին ի յետս, բայց ոչ ասեն, թէ գնայ եւ հաստատէ բարեկամութիւն եւ այլ: Այլ միայն թէ ասին ինձ, թէ յառաջ մեք ինչ որ գրէաք Պարսից, ընդունեցին մեր գրուցն, դուն պատճառ /230a/ եղար, որ այլ ոչ ընդունին: Մեր թագուհին շնորհեց քեզ քոյ մեղն, ունէյիր եւ թէ ոչ, արդ գնայ ի յԱշտարխան, զոր ինչ որ մեր սպառապէտ Մաթուշքինն⁶⁰ քեզ բանի վերայ դնէ, այնպէս արայ: Թէ որ լաւ անես, քեզ համար լաւ գլնի, թէ որ վատ անես, քեզ համար վատ գլնի: Այսպէս դարցուցին ի յետս եւ դրին ի կալանս ի բերթն Կրասնայեարա, մնացի անդ մօտ երեք ամ, ո՛չ սպառապէտ տեսի եւ ո՛չ գործ ինչ, զի գործէյի:

Ուր էր, թէ այնպէս արած լինէյին, Աստուծով փութանակի յայտնէյի նոցա իմ անմեղութիւնն եւ առժամայն որոշիւր ճշմարտութիւնն ի ստուծեննէն. հպարտացն ազգն Ռուստաց ինձ վերայ երախտիք բարձին, թէ շնորհեցաք քեզ. իբր թէ մեղապարտ եւ մահապարտ էի, վասն Պետրոս թագաւորին հոգւոյն շնորհեցին ինձ ի կեան, եթէ անիմաստքն այն այսպիսի պարզ բանիւ ինձ ասէյին, թէ ահայ քեզ վերալ] այսքան մեղ դրին. արդ տես եւ խորհեայ դուն ի քեզ վասն քոյ, եւ մեզ հաւատարմացույ զքո ճշմարտութիւնն: Եթէ այս ամենայն մեղ, որ քո վերալ] բարդած է, եթէ ճշմարիտ է, որ դուն գործած լինիս՝ մահապարտ ես, եթէ ոչ՝ փառաւորեմք զքեզ: Ոչ ասին այնպէս, այլ արկին յանձն իմ ի շարչարանս եւ օր աւուր նորոգէյին, վասն նոցայն նոքայ ոչինչ կարացին առնել առանց ինձ, եւ ես անկայ ի զանազան խոկմունս, յայսպէս ոչինչ եղեւ ամենայն բանն եւ զվաստակն իմն եւ նոցայն, եւ ես իզուր կրեցի

զշարչարանս եւ զրկեցայ ի կենաց. պատճառն, որ /230b/ դատաստան շունիք. Վնասեցին ինձ եւ վնասեցան ինքեանք, որպէս որ մեղուն ամենայն մերձեցողաց առ փեթակն յիւր առհասարակ հարու զկիճն իւր մարդուց, կարծէ, թէ վասն մեղեր հպին առ ինքն, ոչ ճանաչէ, թէ ոչք են, որ կթեն զմեղրն եւ ոչք են, որ միայն վասն հայելույ մերձենան առ ինքն: Վասն այն անզանազան հարու զկիճն վնասէ մարդուն եւ մեռանի ինքն:

Հ. Մեղանչեցիր, որ ոչ յայտնեցիր յՌուստաց զճանապարհն բարեաց, որ ոչ վնասէյին, որպէս որ ասէ Տէրն մեր, թէ բարի առաւել աւելեացն ձեռոց⁶¹, որ թոյլ ետուր ոչ լինիլ այն ցանկալի բարին վասն նոցա եւ վասն ազգն քոյ եւ քեզ:

Պ. Թէպէտ բազումք են պատճառքն, բայց ես աստ յայտնեմ քեզ հինգ բան.

– Նախ որ խիստ անարգեալ շարչարեցին զիս եւ տառապեցուցին զանձն իմ, այնքան բազմացուցին ի վերայ իմ նեղութիւն եւ վիշտն, որ մոռացալ] ամենայն ինչ, եւ հոգացի միայն վասն կենացս եւ յբաղէյի ի զանազան խոկմունս:

– Երկրորդն, որ խաբեցին զիս, խոստացան դնել զիս ի վերալ] գործոց եւ ոչ դրին:

– Երրորդն, որ տեսի իմ ազգն ամենայն յարուցեալ էյին ի վերայ իմ, եւ հակառակ ինձ, որոց վասն աշխատէյի, որպէս որ հակառակեցան խորայելացիքն Մօվսէսի, թէ ո՞ կացոյց զբեզ դատաւոր ի վերայ մերոլ] ⁶², որ նայէր նոցա փրկիչն, ասի՝ որովհետեւ այսպէս է թոյլ տամ եւ տեսանեմ, թէ ուուք ազատեն զնոսա եւ թէ իսպառ կորուսանեն:

– Չորրորդն, /231a/ որ եթէ ես առանց հրամանի զիս ներխառնէյի ի գործս, ոչ գայր համեմատ գործոց եւ օրինաց, քանզի վատահամբաւեցայ, եւ որ ուուք կարծկոտեն որպէս որ ձեզ, եթէ ի մէջ գործոցն, յանկարծ անկանէր սխալ ինչ ամենեւին ինձանէ զիմանային, եւ

60 Матюшкин Михаил Афанасьевич (1676-1737) - գեներալ, մասնակցեց Պետրոսի պարսկական արշաւանքին: Պետրոսի վերադարձից յետոյ զլիսաւորում էր ռուսական զօրաբանակը ամբողջ մերձկասպեան շրջանում:

61 Դուկ. Զ 27

62 Հմմտ. Ել. Բ 14